

*Հաստատված է՝*  
*«ՀՈՒՄԿ» ԿՀ Գիտական խորհրդի*  
*2018թ. մայիսի 24-ի թիվ 2 նիստում*  
*Գիտական խորհրդի նախագահ՝*  
\_\_\_\_\_ *Հ. Մ. Սահակյան*

**«ՀԱՇՎԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ԿՐԹԱԿԱՆ  
ՀԻՄՆԱԴՐԱՄԻՉ ԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄԻ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՄԱՆ ԵՎ  
ԽՐԱԽՈՒՍՄԱՆ ՔԱՂՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐԸ**

**I. Դասախոսական կազմի կատարելագործման քաղաքականությունը  
և ընթացակարգերը**

Դասախոսական կազմի պահպանումը, նրա մասնագիտական առաջընթացի ապահովումը, որակյալ կադրային ներուժի ձևավորումը, օպտիմալ և արդյունավետ օգտագործումը հանդիսանում են «ՀՈՒՄԿ» ԿՀ ռազմավարության կարևորագույն նպատակները:

Որակյալ կրթության ապահովման գրավականը բարձր որակավորում ունեցող դասախոսական կազմի առկայությունն է, որի իրականացման համար անհրաժեշտ է համալրել և բարելավել պրոֆեսորադասախոսական կազմը՝ որակի ապահովման միջազգային պահանջներին համահունչ:

Ռազմավարական այս խնդրի լուծման հիմնական ուղղություններն են.

1. Իրականացնել պրոֆեսորադասախոսական առկա ներուժի գնահատում՝ ըստ մասնագիտական պատրաստության, մանկավարժական վարպետության և տարիքային կազմի:

2. Գնահատել կրթական գործընթացի կադրային ապահովվածությունն ըստ գիտակարգերի:
3. Մշակել պրոֆեսորադասախոսական կազմի համալրման և կատարելագործման երկարաժամկետ ծրագիր:
4. Մշակել և շարունակաբար կատարելագործել դասախոսական պաշտոնների տեղակալման չափանիշները և գործընթացները:
5. Մշակել և ներդնել պրոֆեսորադասախոսական կազմի որակավորման բարձրացման կրթագիտական ծրագիր՝ շարունակաբար թարմացնելով և բազմազանեցնելով որակավորման բարձրացման կրթական ծրագրերն ու ձևերը, որոնք միտված են զարգացնելու դասախոսների հմտությունները դասավանդման, ուսումնառության և գնահատման մեթոդների կիրառման մեջ:
6. Ապահովել դասախոսական կազմի պարտադիր և լիարժեք մասնակցությունը որակավորման բարձրացման ծրագրերին:
7. Խրախուսել դասախոսների ինքնակրթությունը և գիտական ու մանկավարժական շարժունությունը:
8. Վերապատրաստել դասախոսներին կրթական բարեփոխումներ կատարելու նպատակով՝ տիրապետելու կրթական նորագույն տեխնոլոգիաներին և դրանք ներդնելու ուսումնական գործընթացում՝ շարունակաբար մշակման և իրագործման ճանապարհով:
9. Հիմնել պարզևներ լավագույն մանկավարժական-մեթոդական փորձի ճանաչման և խրախուսման համար:
10. Խրախուսել դասախոսական կազմի մասնակցությունը «ՀՈՒՄԿ» ԿՀ կառավարման և որոշումների ընդունման գործընթացներում:

Պրոֆեսորադասախոսական կազմի որակավորման բարձրացման կրթագիտական ծրագիրը և ժամանակացույցը քննարկվում և հաստատվում է Գիտխորհրդի նիստերում:

## II. Դասախոսական կազմի խրախուսման քաղաքականությունը և ընթացակարգերը

1. «ՀՈՒՄԿ» ԿՀ դասախոսական կազմի դասավանդման որակի և արդյունավետության բարելավման նպատակով ձևավորել առաջավոր մանակավարժական-մեթոդական փորձի խրախուսման և տարածման մեխանիզմներ:
2. Այդ նպատակով սահմանել «Լավագույն դասախոս» մրցանակ:
3. «Լավագույն դասախոս» ամենամյա մրցանակի սահմանումը կոչված է խթանելու «ՀՈՒՄԿ» ԿՀ դասախոսների՝
  - ա. որակավորման անընդհատ աճը,
  - բ. արտալսարանային աշխատանքներն ուսանողների հետ,
  - գ. գիտահետազոտական աշխատանքների ակտիվությունը,
  - դ. ուսումնամեթոդական և գիտամեթոդական աշխատանքները,
  - ե. մասնակցությունը «ՀՈՒՄԿ» ԿՀ գործունեության արդյունավետության բարձրացմանը:
5. «Լավագույն դասախոս» ամենամյա մրցանակաբաշխությունն անցկացնելու նպատակով դասախոսների գիտամանկավարժական գործունեության ամենամյա պարտադիր գնահատման ուսանողական հարցումների արդյունքները զուգակցել գործընկերների հանրագումարային կարծիքների հետ՝ հաշվի առնելով նաև՝
  - ա. գիտահետազոտական աշխատանքների ակտիվությունը,
  - բ. արտալսարանային աշխատանքները ուսանողների հետ,
  - գ. ուսումնամեթոդական և գիտամեթոդական աշխատանքները,
  - դ. մասնակցությունը «ՀՈՒՄԿ» ԿՀ գործունեության արդյունավետության բարձրացմանը: